

381. 6

2-24

Զ. ԼԱՎՐԵՆՏԻԵՎ

# ՀԱՅԻ ՄԱՍԻՆ

Նյութեր

Ա.գիտաստրների համար

---

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՆԻՍՏՐՈՒՄ

ՅԵՐԵՎԱՆ - 1928

30.04.2013

06 APR 2010

381.6

L-24

ար

Զ. ԼԱՎՐԵՆՏԻԿ

# ՀԱՅԻ ՄԱՍԻՆ

Դ յուրեր

Ազիսասորների համար

163



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1928

1227 Զ. 57

**ՀԱՅԻ ՄԱՍԻՆ.**

Կես տարի յե արդեն հացամթերման խնդիրը հանդիսանում ե կուսակցութեան և խորհրդային իշխանութեան ուշադրութեան առարկան: Այն ժամանակ, յերբ մեր տնտեսական ֆրոնտի մյուս վճռողական բնագավառներում—արդյունաբերութեան, տրանսպորտ, բյուջե, դրամական շրջանառութեան և այլն—մենք առաջադիմում ենք աջողութեամբ, **հացի** շուկայում հանդիպեցինք լուրջ դժվարութեաններին:

Հայթայթման ընդհատումները, վոր տեղի ունեցան առանձին վայրերում, վորոշ տեղեր խուճապային տրամադրութեան առաջ բերին: Մինչդեռ հացի ֆրոնտի դրութեան և հեռանկարների հանգիստ և լուրջ գիտակցումը բոլոր աշխատավորների կողմից՝ հանդիսանում ե հիմնական պայմաններից մեկն այն բանի, վոր մենք դուրս կգանք ներկա դժվարութեաններից: Մեր ագիտացիան պարտականութեան ունի—բանվոր և գյուղացի մասսաներին ընդարձակորեն բացատրել հացի դրութեան և մեր անելիքների մասին:

Ներկա գրքույկը տեղեկատու նյութ ե հանդիսանալու կուսակցութեան ստորին ակտիվի և մանավանդ ագիտատորների համար՝ հացի խնդրի վերաբերմամբ:

**Հացամթերում-** Դրութեանն ամենասուր կերպանք ստացավ 1928 թ. հունվարին, յերբ պարզվեց, վոր 1-ին կիսամյակում (հացամթերման տարին հաշվում են հուլիսից) մեր հաց մթերողները 125 միլիոն փութ հացահատիկ

Գրառեպլար 892 (բ.) Հր. 824 Տիրաժ 3000

Պետհրատի 2-րդ տպարան Յերևանում—պատ 997

պակաս են մթերել, քան անցյալ տարվա նույն ժամանակամիջոցին: Շնորհիվ կուսակցութեան և խորհրդային իշխանութեան կարուկ միջոցներով, մենք հունվարին, փետրվարին և մարտին գրեթե լրացրինք առաջին կիսամյակի պակասը: Յեթե ներկա տարվա մթերումները համեմատենք անցյալ տարվանի հետ — կստացվի հետևյալ պատկերը (տես 5-րդ եջի աղյուսակը):

**Մքերված պլանայից մքերողների կողմից**

(Միլիոն փթերով)

	1026—27 թվին			1927—28 թվին		
	Բոլոր հացահատիկները	Այդ թվում		Բոլոր հացահատիկները	Այդ թվում	
		Տարեկան	Ցորեն		Տարեկան	Ցորեն
1 յեռամսյակ . . .	149,5	29,2	95,3	161,8	41,6	101,0
2           »           .	287,8	57,7	162,6	150,7	31,8	79,8
3           »           .	159,7	36,4	82,4	264,5	73,6	130,0
Ապրիլ . . . . .	27,1	5,5	15,2	13,3	3,9	5,8
Մայիս . . . . .	19,4	4,8	11,0	17,2	6,1	7,0
Ընդամենը 11 ամսվա ընթացքում	643,5	133,6	366,5	607,5	157,0	323,6

Այդ աղյուսակը պարզ ցույց է տալիս, թե վոր քան կարևոր էր այն բեկումը հացամթերման մեջ, վոր

զլուխ բերնք ներկա տարվա 3-րդ յեռամսյակում: Հենց այդ յեռամսյակը նաքարվորութուն տվեց մթերած հացի ընդհանուր գումարը հասցնել գրեթե այն մակարդակին, վորին հասանք անցյալ տարի: Մենք ասում ենք՝ գրեթե, վորովհետև հունիսի 1-ին մթերումները հասել էին 607 միլիոն փթի՝ հակառակ 643 փթի, վոր մթերվել էին անցյալ տարվա հունիսի 1-ին:

Աղյուսակը ցույց է տալիս նաև, վոր մեր ամենամեծ զժվարութունները ցորենի շուկայումն են. այն ժամանակ, յերբ տարեկանի մթերումը ներկա տարում գերազանցել է անցյալ տարվանին 23 միլիոն փթով, ցորենի մթերումը անցյալ տարվանից պակաս է 43 միլիոն փթով:

Դեռ կուսակցության XV-րդ համագումարը հավաստեց, վոր գյուղատնտեսութեան մակարդակը տակավին ֆնում է ծայր աստիճան ցածր (բանաձև կԿ-ի հաշվեալութեան առթիվ):

Չնայած այն վերելքին, վոր կատարել ենք վերջին տարիներս ընդհանուր ժողովրդական անտեսութեան մեջ, այդ թվում և գյուղատնտեսութեան, համագումարն ընդգծեց, «վոր բերքատվութեան մակարդակը տակավին շատ ցածր է, մանավանդ Յեվրոպայի և Ամերիկայի համեմատութեամբ, վոր գյուղատնտեսութեան զարգացման տեմպը տակավին շատ թույլ է, վոր ծայր աստիճան մեծ է նրա կախումը բնութեան ֆակտորներից (յերաշտ և դրս հետ կապ ունեցող անբերրիութունը և այլն), վոր գյուղատնտեսութեան ապրանքայնութունը տակավին ծայր աստիճան քիչ է համեմատութեամբ այն ինդիքներով, վոր զրված են

ներկայումս գյուղատնտեսութեան առաջ՝ սոցիալիստական ժողովրդա-անասնութեան պլանի տեսակետից» (Համկեզ(բ) XV-րդ համագումարի՝ գյուղում կատարվող աշխատանքի մասին ընդունած բանաձևից):

Համագումարի մատնանշած մոմենտներից կարելի է վերը հանդիսանում է գյուղատնտեսութեան ներկայիս ցածր ապրանքայնութիւնը:

Յեթն վերցնենք գյուղատնտեսութեան ընդհանուր արտադրանքը, նա 1927/28 թվին մոտեցել է նախապատերազմյան մակարդակին: Այսպես, որինակ, ցանքսի տարածութիւնը, վոր 1913 թվին կազմում էր 108 միլիոն դեսյատին, ներկա տարում կազմում է 106 միլիոն դեսյատին: Անասունների քանակը միջին թվով (այսինքն՝ բոլոր տեսակի անասունները խոշորի հաշվով) նախապատերազմյան քանակից ավելացել է 3% -ով: Այդ թվում կովերի քանակը 26 միլիոնից (1913 թվին) հասել է մինչև 30 միլիոնի (1927/28 թ.): Այս ավյալների մեջ պետք է ուղղում մտցնել՝ բնակչութեան աճումը նկատի ունենալով: Յեթն վերցնենք ցանքսի տարածութիւնը, շնչին այժմ ընկնում է 90% նախապատերազմյանից: Անասունները միջին թվով (խոշորի հաշվով) շնչին ընկնում են 95% 1913 թվի համեմատութեամբ:

Զգալի կերպով դրութիւնը վատանում է, հենց վոր ընդհանուր արտադրանքից անցնում ենք ապրանքայինին, այսինքն՝ գյուղատնտեսութեան արտադրանքի այն մասին, վոր գյուղացիութիւնը հանում է շուկա:

Վերցնենք հացահատիկները (տարեկան, ցորեն, վարսակ, գարի և այլն), Մինչև պատերազմը գյուղա-

տնտեսութիւնը արտադրուլյա (գյուղից դուրս գտնւ-վող) շուկային տալիս էր 1,300 միլիոն փութ ցորեն: Դրանից 500 միլիոն փութը ուտում էր քաղաքը, իսկ 800 միլիոն փութը արտահանվում էր (արտասահման): Այդ 1,300 միլիոն հացամթերքը կազմում էլին 26% -ը հացի ընդհանուր արտադրանքի, վորը կազմում էր 5

Մինչ պատերազմը	Հացի ընդհանուր արտադրանքը		Ապրանքային հաց (արտագյուղյա)		Ապրանքային փութ/1000
	Միլիոն փութերով	% 0/0-ով	Միլիոն փութերով	% 0/0-ով	
1. Գալվածատերերը	600	12,0	281,6	21,6	47,0
2. Կուլակները	1,900	38,0	650,0	50,0	34,0
3. Միջակներն ու չքավորները	2,500	50,0	369,0	28,4	14,7
<b>Ընդամենը</b>	<b>5,000</b>	<b>100,0</b>	<b>1,300,6</b>	<b>100,0</b>	<b>26,0</b>
1926—27 թվին					
1. Խորհրդ. տնտես. և կոլտնտեսութ.	80,0	1,7	37,8	6,0	47,2
2. Կուլակները	617,0	13,0	126,0	20,0	20,0
3. Միջակներն ու չքավորները	4,052,0	85,3	466,2	74,0	11,2
<b>Ընդամենը</b>	<b>4,749,0</b>	<b>100,0</b>	<b>630,0</b>	<b>100,0</b>	<b>13,3</b>

միլիարդ փութ: Սա նշանակում է, վոր հացի ապրանքայնութիւնը կազմում էր 26%:

Պատկերը զգալի կերպով փոխվել է հեղափոխությունից հետո: Ամբողջ ապրանքային հացը, վոր գյուղը տալիս է դրսի (արտագյուղյա) շուկային, 1926/27 թ. կազմում էր 630 միլիոն փութ: Ընդհանուր արտադրանքի (4,79 միլիոն փութ) վերաբերմամբ դա կազմում էր 13<sup>0</sup>/<sub>100</sub>-ը: Մենք տեսնում ենք հացի ապրանքայնությունը կրկնակի ընկած:

Ի՞նչն է հացի ապրանքայնության այդքան շատ ընկնելու պատճառը: Ինչո՞ւ գյուղը, վոր արտադրում է գրեթե նույնքան հաց, վորքան արտադրում էր մինչ պատերազմը, դրսի (արտագյուղյա) շուկային տալիս է յերկու անգամով պակաս հաց:

Ընկ. Ստալինը, այդ հարցին պատասխանելով, բերել է հետևյալ աղյուսակը, վոր ցույց է տալիս հացի արտադրության և ապրանքային հացի վիճակը մեր յերկրում—մինչ հեղափոխությունը և այժմ: Այս թվերը, վոր սովել է կենտ. վիճ. վարչ. կոլլեգիայի անդամ ընկ. Նեմչինովը, ստույգ լինելու հավանություն չունեն, բայց դրանք հնարավորություն են տալիս մոտավոր հաշիվներ անելու:

«Ի՞նչ է ասում այս աղյուսակը:

Նախ և առաջ ասում է այն, վոր հացի մթերքների ճնշող մասսայի արտադրությունը կալվածատերերից ու կուլակներից անցել է մանր ու միջակ գյուղացիներին:

Սա նշանակում է, վոր մանր ու միջակ գյուղացիները, ազատվելով բոլորովին կալվածատիրական ճնշումից և, հիմնականում, ջլատելով կուլակության ուժը՝ հնարավորություն ստացան լուրջ կերպով բարելավելու իրենց նյութական դրությունը: Սա Հոկ-

տեմբերյան հեղափոխությունից հետևանքն է: Սրա մեջ արտահայտվում է ամենից առաջ՝ այն վճռական ուղուտը, վոր գյուղացիության հիմնական մասաները ստացան Հոկտեմբերյան հեղափոխությունից:

Յերկրորդ՝ ասում է այն, վոր ապրանքային հացի հիմնական տերերը մեզանում անդիսանում են մանր և, ամենից առաջ, միջակ գյուղացիները: Սա նշանակում է, վոր վո՞չ թե հացի ընդհանուր արտադրանքի տեսակետից, այլ ապրանքային հացի արտադրության տեսակետից ՍՍՀՄ դարձել է, Հոկտեմբերյան հեղափոխությունից հետեանքով, մանր-գյուղացիական տնտեսությունների, իսկ միջակը—յերկրագործության կենտրոնական դեմքը:

Յերրորդ՝ ասում է այն, վոր կալվածատիրական (խոշոր) տնտեսության լիկվիդացիան, կուլակային (խոշոր) տնտեսության կրճատումը ավելի, քան յերեք անգամ, և մանր գյուղացիական տնտեսություններին անցնելը, վոր ներկայացնում է ապրանքայնության միայն 11<sup>0</sup>/<sub>100</sub> ը, և փոքրիշատե զարգացած խոշոր հասարակական տնտեսության (կոլ. տնտես, խորհրդ. տնտեսություններ) բացակայությունը, պետք է առաջ բերելին և իրոք առաջ բերին ապրանքային հացի խիստ կրճատում՝ նախապատերազմյան ժամանակի համեմատությամբ» (Ստալին):

Այսպիսով, ապրանքային հացի կրճատումը բացատրվում է նախ և առաջ՝ «մեր գյուղատնտեսության կառուցվածքի (строение), Հոկտեմբերյան հեղափոխության հետևանքով կատարված, փոփոխությամբ, խոշոր կալվածատիրական և խոշոր կուլակային տնտեսությունից (վոր տալիս էր ապրանքային հացի

ամենաշատ քանակը) մանր և միջակ տնտեսութեան անցնելով: Հենց միայն այն, վոր մինչ պատերազմը ունեցինք 15 — 16 միլիոն անհատական գյուղացիական տնտեսութեաններ, իսկ այժմ ունենք 24 — 25 միլիոն գյուղացիական տնտեսութեաններ, — սա արդեն վկայում է այն, վոր մեր գյուղատնտեսութեան հիմնական բազան հանդիսանում է մանր գյուղացիական տնտեսութեանը, վոր տալիս է ապրանքային հացի միւնիստումը: Գյուղատնտեսութեան մեջ խոշոր տնտեսութեան ուշքը, լինի նա կալվածատիրական, կուլակային թե կոլլեկտիվ տնտեսութեան, կաշանում է նրանում, վոր նա այդ խոշոր տնտեսութեանը, հնարավորութեան ունի գործադրել մեքենաներ, ոգտադրածել գետնային տվյալները, պարարտացնել հողը, բարձրացնել աշխատանքի արտադրողականութեանը և, այդպիսով, տալ ապրանքային հացի շատ ավելի մեծ քանակ: Յեւ, ընդհակառակը, մանր գյուղացիական տնտեսութեան թուլութեանը նրա մեջ է, վոր նա զուրկ է, կամ դրեթե զուրկ է, այդ հնարավորութեաններից, վորի պատճառով էլ նա հանդիսանում է կիսապառուղական տնտեսութեան, և սակավ ապրանքային: Վերցնենք, որինսակ, կոլտնտեսութեաններն ու խորհրդ. տնտեսութեանները: Նրանք մեզանում ապրանքային հաց տալիս են իրենց ընդհանուր արտադրանքի 47,2 տոկոսը: Այլ խոսքով սա՞՞ նրանք ապրանքային հաց տալիս են ավելի քան կալվածատիրական տնտեսութեանը պատերազմից առաջ: Իսկ մանր ու միջակ գյուղացիական տնտեսութեանները: Նրանք մեզանում ապրանքային հաց տալիս են ընդամենը միայն 11,2 տոկոսը իրենց ար-

տադրանքի ընդհանուր գումարից: Տարբերութեանը ինչպիս տեսնում եք, բավական պերճախոս է» (Ստալին):

Հացի հսկայական արտաձումը նախապատերազմյան Ռուսաստանից, իսկապես, հիմնված էր վոչ թե յիբրում չեղած հացի իրական ավելցուկի վրա, այլ այն բանի վրա, վոր գյուղացիութեան չքավոր ու միջակ լայն մասսաները և քաղաքի աշխատավորական մասսաները կիսակուշտ էլին մնում:

«Կիսակուշտ մնաք, բայց արտահանենք» — անավասիկ ինչ լողունգով էր իրականացնում իր հացի արտաձումը ցարական-կալվածատիրական Ռուսաստանը: Կիսակուշտ մնում էլին, իհարկե, վոչ կալվածատերերը, վոչ էլ կուլակները, այլ գյուղական չքավորութեանը: Հացը գյուղացիութեան ձեռից շորթում էլին տուրքերի, հողային հարկերի ճնշումով: Իսկ կալվածատերերն ու կուլակները, վոր մինչ հեղափոխութեանը տիրում էլին մոտ 100 միլիոն հեկտար հողի (ՌՍՖՍՀ տերրիտորիայում), շուկա էլին հանում ընդհանուր ապրանքային հացի հսկայական մասը: Հոկտեմբերյան հեղափոխութեանը գրեթե բոլոր այդ հողերը հանձնեց չքավորներին ու միջակներին (կալվածատերերը բոլորովին լիկվիդացիայի են չենթարկված, իսկ կուլակների ձեռին մնացած հողը տասն անգամ ավելի պակաս է, քան մինչև հեղափոխութեանը): Հողային այս բաժանումը պատճառ չեղավ, վոր միջակներն ու չքավորներն այժմ արտադրում են 1½ միլիարդ փութ հաց ավել, քան մինչև հեղափոխութեանը: Վորովհետև գյուղական չքավորների և միջակների սընունդի մակարդակը մինչ հեղափոխութեանը ծայր աստիճան ցածր էր. ուստի չքավորի և միջակի հացի ար-

տադրանքի այս աճը գործադրվեց աշխատավոր գյուղացիութեան կյանքի բարելավման վրա:

Այսպիսով, Հոկտեմբերյան հեղափոխ. հեռանալով գյուղացիութեան մասսայի կողմից հաց սպառելու աճումը հանդիսանում է այժմ հիմնական ֆակտ, վորը և վորոշում է մեր գյուղացիները հացի ֆրոնտում:

Միևնույն ժամանակ խիստ աճում է հացի պահանջը նաև քաղաքի կողմից և այն ուսուցանների կողմից, վորոնք արտադրում են գյուղատնտես-

ՄԵՆԴԱՄԹԵՐՔՆԵՐ	Պետերբուրգ 1908 թ.	Մոսկվա Լենինգրադ 1926 թ.
1. Տարեկանի հաց . . . . .	21,8	19,8
2. Ցորեն հաց . . . . .	8,3	12,0
3. Միս . . . . .	4,5	5,7
4. Պատուց չուղ . . . . .	0,33	0,5
5. Կովի ,, . . . . .	0,49	0,54
6. Կրուպա . . . . .	1,12	1,22
7. Գետնախնձոր . . . . .	12,8	10,8

սական հում նյութեր (բամբակի, շաքարածակնդեղի, վուշաբուծական շրջանները և այլն): Մեր քաղաքներն աճում են: Ավելացել է վոչ միայն բնակչութեան բնական աճումը Քաղաքներն են գալիս հետզհետե ավելի ու ավելի մեծ թվով մարդիկ գյուղերից: Վերջին շրջանը տարվա ընթացքում, այսպիսով, մեր քաղաքներն են չեկիլ մոտ 2½ միլիոն մարդիկ (սա բացի քաղաքային բնակչութեան բնական աճումից):

Ծավալված շինարարությունը, ընդարձակված ֆարրիկներն ու գործարանները այս բոլորն առաջադրում են հացի պահանջ՝ ավելի մեծ մասսայի համար: Աճում են և հացի սպառման նորմաները քաղաքներում՝ բնակչութեան բարեկեցութեան մակարդակի ընդհանուր բարձրացման շնորհիվ: Մասսայական գործածություն մեջ տարեկանին հետզհետե փոխարինում է ավելի ցորենը:

Ահա մի աղյուսակ, վոր տալիս է մայրաքաղաքների բանվորների սպառումի պատկերը 1908 թ. և 1926 թ. (միջին թվով, մեկ ուսողին ամիսը կիլոգրամներով):

Մենք տեսնում ենք, թե ինչպես տարեկանը տեղի չե տալիս ցորենին, ինչպես գետնախնձորը փոխարինվում է հացով, չուղով, մսով և այլն, Յեթե հաշվի տանենք, վոր 1926 թ. մինչև 1928 թ. սպառման աճումը և նրա վառակի լավացումը շարունակվում է, կհասկանանք, թե բանվորական մասսայի սննդի այդ փոփոխությունը վորքան պիտի անդրադառնա շուկայի վրա:

Միտնգամայն պարզ է, վոր այս թվերը բնորոշում են վոչ միայն մայրաքաղաքների բանվորների սնունդը, այլև բոլոր մնացած քաղաքների և արդյունաբերական ուսուցանների բանվորների սննդառությունը:

Ընկ. Ստրուվիլինը տալիս է տվյալներ, վորոնք պատկերացնում են ամբողջ միութեան բանվորների սննդառությունը (վոչ միայն մայրաքաղաքների) 0%-ով նախապատերազմյանի համեմատությունը (1908—1922 թվականներին):

Ահա այդ տվյալները:

Յեթե մենք տվյալներ ունենայինք այն ժամանակի մասին, վոր անցել է 1925/26 թվից մինչև այսօր, այդ դեպքում պատկերն, անշուշտ, ելավելի պայծառ կլիներ:

Մթերքներ	Սպառումը 0/0-ով նախապատերազմյանի համեմատումով.
Տարեկանի ալյուր . . . . .	95
Ցորենի » . . . . .	164
Զկնեղեն . . . . .	64
Միս (և ճարպ) . . . . .	157
Պասուց յուղ . . . . .	97
Կովի » . . . . .	142
Շաքար (և այլ քաղըցրեղեն) . . . . .	128
Հագուստ, սպիտակեղեն և վոտնաման . . . . .	115

Բամբակի, վուշի, շաքարի ճակնդեղի ցանքսի աճումը պատճառ է դառնում, վոր հում մթերքների ուստի հացահատիկ ավելի քիչ են ցանում: Սա ևս հացի հավելյալ պահանջի աղբյուր է:

Վերջապես, սպառող շրջանում աճում է նույնպես հացի սպառումը հենց գյուղացիության կողմից, վոր կապ ունի տնայնագործական արհեստների, դրսի աշխատանքի գնալու սեզոնային աշխատանքների և այլնի հետ:

Ահա մի աղյուսակ, վոր տալիս է գյուղի բնակչության անդի վորակի աճման և լավացման պատկերը՝ մեր տնտեսության վերականգնման տարիների ընթացքում,

Մթերքներ	1926 թ. փետ. և 19 3 թ. փետ. 0/0-ի համեմատությամբ.	
	Սպառող շրջան	Արտադրող շրջան
Տարեկանի ալյուր . . . . .	97,5	70,8
Ցորենի » . . . . .	153,5	131,8
Շաքար . . . . .	326,7	437,9
Միս . . . . .	242,6	331,8
Զկնեղեն . . . . .	92,8	67,5
Ճարպ . . . . .	208,8	319,5
Կովի յուղ . . . . .	141,4	160,6
Կաթ և կաթնամթերք . . . . .	193,4	181,5
Զու . . . . .	100,0	252,4

Այստեղ ել տեսնում ենք, թե ինչպես տարեկանի հացը տեղի յե տալիս ցորեն հացին (ընդհանուր սպառվող հացի քանակի աճման ժամանակ), ձկնեղենը՝ մսին, թե ինչպես է աճում յուղի, ձուի, կաթի և այլ աննդամթերքների սպառումը գյուղում:

Այսպիսով մենք ունենք. 1) աշխատավոր գյուղացիության հացի սպառման աճում և դրա հեռանքով յերկրում ապրանքային հացի քանակի կրճատում,

և 2) հացի սպառման աճում քաղաքներում և հում մթերքներ արտադրող ուսուցիչներում:

Հացի սպառման այդ աճումը պարզ յերևում և հետևյալ թվերից:

Մենք այս տարի, 9 ամսվա ընթացքում (1927 թ. հուլիսից մինչև 1928 թ. ապրիլը) ծախսել ենք ներքին շուկայում, պլանային մթերոցների միջոցով, 126<sup>1</sup>/<sub>2</sub> միլիոն փութ հացահատիկ ավելի, քան անցյալ տարի: Մենք այսպիսի գերաժախս, անցյալ տարվանի հակառակ, կարողացանք անել այն պատճառով, վորովհետև խիստ կրճատեցինք հացի արտաձուլման արտասահման: Անցյալ տարի մենք արտահանեցինք արտասահման 154 միլիոն փութ հաց, այս տարի միայն 26 միլիոն փութ (հենց վոր պարզվեց, թե մթերումները թույլ են կատարվում—հացի արտաձուլը կրճատվեց):

Այդ պատճառով թեև այս տարվա մթերումները չեն անցնում անցյալ տարվանից, բայց բնակչությանը կարողացել և գնել 9 ամսվա ընթացքում 126<sup>1</sup>/<sub>2</sub> միլիոն փութ հաց ավելի, քան անցյալ տարի: Այս թվի մեջ մտնում և և մի այնպիսի ծախս, ինչպիսին և չքավոր ու միջակ գյուղացիությանը պարնանացանի համար 20 միլիոն փութ սերմացու բաժանելը: Այստեղ մտնում և նաև Անդրկովկասի և Միջին Ասիայի հացի մատակարարման ավելացումը՝ այդ տեղերում բամբակի ցանքսերն ընդարձակելու նպատակով:

Այսպիսով ներքին շուկան հետզհետև ավելի հաց և պահանջում, և այդ պահանջի ընդհանուր գումարը հասնում և տարեկան 700—725 միլիոն փութի: Ապրանքային հացի արտադրությունը յետ և մնում հացի պահանջը աճելու պատճառով:

**Կուլակ և ոգս-  
վում և գծվա-  
ուրբուցներ**


Գյուղի կուլակ և սպեկուլյանտ տարբերը, ինչպես հայտնի յե, փորձեցին սպեկուլյանտ հացի ֆրոնտի մեր այս դժվարություններից: Կուլակը բռնեց հացը պահելու և նրա գծերն ունեցնելու գիծը: Այստեղ կարևորը միայն այն չե, վոր կուլակը սկսեց իր սեփական պաշարները պահել: Չե վոր կուլակը գյուղում հաճախ հեղինակություն և անտեսական խնդիրներում: Նրա ագիտացիան, նրա որինակը ազդում և միջակների ավելի ունեոր մասի վրա: Ահա թե ինչու կուսակցությունն ու խորհրդային իշխանությունը ձեռք առան կարուկ միջոցներ՝ պայքարելու կուլակների այդ սպեկուլյանտիվ մեքենայությունների դեմ, մինչև իսկ հացի մեծ պաշարներ պահող չարանեղ սպեկուլյանտներին 17 հոգվածի համաձայն (վոր պատժում և սպեկուլյացիայի համար) դատի հանձնելով: Միևնույն ժամանակ հացի շրջաններն են տարված մեծ քանակությամբ արդյունաբերակա՞ն ապրանքներ, վորպեսզի ուժեղանա գյուղացիության հացի վաճառքը: Այս միջոցները, ինչպես տեսանք վերև բերված թվերից. հացամթերման գործում բեկում առաջ բերին: Մենք պատվեցինք հացի գործի կատաստրոֆիկ դրությունից: Բայց գծվարությունները վերացված չեն ամբողջովին: Այժմ հարցն այն և, վոր դեմանանք (ДОТЯНУТ) մինչև նոր բերքը և ապահովենք նորմալ հացամթերումը յեկող տարի:

**Հայրայրման  
և երեխաներ**

Մեր հացը կհերքվի արդյոք մինչև նոր բերքը: Այն պաշարները, վոր ունի պետությունը, անպայման հնարավորություն են տալիս՝

596

1822 57



բնակչութեանը հաց մատակարարել մինչև նոր բերքը: Բայց մի պայմանով—հացի սպառումը **սեփեփեփով**: Չե վոր նոր բերքի հացը միանգամից, մի որվա մեջ, դաշտից Հացամթերքի խանութը չի ընկնի: Մանավանդ վոր ուշ գարնան պատճառով փոքր ինչ ուշանալու յե և նոր բերքի հավաքումը: Բացի դրանից, անհրաժեշտ և, վոր աշնանացանի կամ պանիային չքավորներին և միջակներին սերմացու մատակարարենք: Դա կպահանջի 18 միլիոն փութ հացահատիկ նոր բերքի առաջին մըթերումից: Դործը պետք և այնպես դնել, վոր յեղած պաշարները բաժանվեն և ոգտագործվեն ուսցիտնալ կերպով և տնտեսաբար: Դրան են վերաբերում և վերջին ժամանակներս ձեռք առնված միջոցները:

1. Կրճատել ալյուրի վաճառքը և փոխարինել դրան հացի վաճառքով: Այս միջոցը կրկնակի անտեսում և տալիս: Ամենից առաջ դադարեցնում և ալյուրի խոճապային գնումը, վոր կատարում և բնակչութեանը պաշարի համար: Հետո անտեսվում և հացը թխելիս, վորովհետև խոշոր հացամթիւումը ավելի անտեսում և տալիս ալյուրը սպառելու իմաստով, քան տանը թըխելը:

2. Անցնել ցորենի ութսուն տոկոսյա միատեսակ ալյուրի մշակման: Ցորենն այս ձևով աղալուց ստացվում և ավելի ալյուր, քան նախկին ձևով աղալուց:

Վատանում և արդյոք դրանից ցորենի ալյուրի վորակը, նրա անդարարութեանը: Հացի գույնը փոքր ինչ փոխվում և, բայց ալյուրի անդարարութեանը, 80% աղալու դեպքում, չի պակասում: Իսկ դրա փոխարեն, յեթե առաջ յերեք տեսակի աղալու դեպքում ստացվում եր առաջին տեսակը—սպիտակ ալյուր, յերկ-

րորդ տեսակը—լավ հաց և յերրորդը՝ գործածութեան համար անպետք (նա մասամբ գործադրվում եր իրրեկեր ձիերի համար), հիմա մի տեսակ աղալու դեպքում մենք շահում ենք այն, վոր ամբողջը կերթա սննդի համար:

Այստեղ կա մի հանգամանք ևս: Նախկին յերեք տեսակն աղալու ժամանակ հատկապես սպեկուլյացիա յեր ծավալվում առաջին տեսակի (սպիտակ ալյուրի) շուրջը: Այդ տեսակը քիչ եր և դա արհեստական կերպով ուժեղացնում եր սպեկուլյացիան: Այժմ այդ բանն այլևս չի լինի:

Այսպիսի միատեսակ աղացում վաղուց կատարվում և Ֆրանսիայում, Իտալիայում և այլ յերկրներում:

3. Պեաք և բռնել այն գեծը, վոր հացի նորմալ, անընդհատ հայթայթումով ապահովվեն առաջին հերթին խոշոր քաղաքներն ու արդյունաբերական ուսուցիչները: Մենք չենք կարող բոլոր մանր քաղաքներին ու գյուղաքաղներին հաց հայթայթել իհաշիվ պետական մթերումների: Այդ տեղերում պետք և զարկ տրվեն կոոպերացիայի մթերումներին, տեղական շուկաներին, ուր գյուղացիներն անմիջապես հաց են բերում և այլն:

Վոչ մի դեպքում թուլատրելի չեն այն այլանդակութեանները, վոր թուլատրվել եյին միջանի ուսուցիչներում, յերբ շուկաները ցրում եյին, շուկան հացահատիկ բերող գյուղացիներին հարկադրում եյին տանել դրանց լցնել պետական հաց մթերողների պահեստները, վարչական կարգով սահմանում եյին հաստատուն գներ շուկաներում և այլն: Վարչական այսպիսի խիստ միջոցները բնավ չեն բղիւում կոոսակցութեան գծից, վոր բռնել և շուկաները կանոնավորելու կուրսը, վոր

չի վերացրել և չի պատրաստվում վերացնելու գյուղացու հացի առևտուր անելու ազատութիւնը:

4. Մենք պետք է հացը ծախսենք հաստատուն ծրագրով: Իժմար չե մի շարժվա մեջ բոլոր պաշարները շուկա հանել, բայց նրանք կընկնեն սպեկուլյանտի և ավելի ճարպիկ մարդկանց ձեռքը, վոր պաշար են հավաքում: Պետք է պարզ գիտակցել տալ վոր տեղական կոոպերատիվների կողմից հացը ծախսելու խիստ նորմաները բնավ չեն նշանակում այն, թե հաց չկա: Բանն այն չէ, թե հաց չկա, այլ այն, վոր **չեղած պաշարները** շուկայի բաժին չդառնան և դատարկաձեռն չմնանք հաց հայթայթելու ամենապատասխանատու շարաթիւններում:

Այս բոլոր միջոցների կիրառումը լիակատար հնարավորութիւն կտա ապահովել հացի անընդհատ հայթայթումը մինչև այն մոմենտը, յերբ նոր բերքը մեր արամագրութիւն տակ կլինի:

Ապագա բերքի նշանները զգալիորեն լավացել են վերջին շարաթիւնը: Գարնանը միքանի շրջաններում փչացավ աշնանացանի վորոշ մասը: Շնորհիվ գյուղացիութիւն յեռանդի, խորհրդային իշխանութիւն տված սերմացուի և գործիքների ոգնութիւնը, հաջողից այդ տեղերում նորից ցանել փչացած ցանքսերի տարածութիւնը: Անձրևներն ոգնեցին թե աշնանացանին թե գարնանացանին: Հետևանքը — մենք սպասում ենք լավ բերք, մանավանդ գարնանացանից:

Հունիսի 15-ի տվյալների համաձայն, բերքի գրութիւնը հետևյալն է: Յեթե միջին բերքը վերցնենք 100, այդ դեպքում, միջին թվով (ԽՍՀՄ մեջ) աշնանացանը ցույց է տալիս 99, իսկ գարնանացանը — 127:

Միջին թվով, ամբողջ ցանքսը բնորոշվում է այս դեպքում — 117 թվով (հակառակ անցյալ տարվա 106-ի): Ի հարկե, այստեղ հնարավոր են հետագայում փոփոխութիւններ: Բայց այժմ՝ հունիսին՝ ապագա բերքի գրութիւնը միանդամայն լավ է: Հացաֆուրածային ապագա տարվա բալանսը պարզվում է այժմ. հունիսի 15-ի տվյալների համաձայն, ունի այս պատկերը: Հացահատիկների ընդհանուր հավաքը (сбор) աճում է, անցյալ տարվանի հակառակ, 400—500 միլիոն փթով, ըստ վորում գարնան ցորենի աճը ծածկում է տարեկանի և աշնան ցորենի պակասը:

Հարց է ծագում, թե ի՞նչ գիծ են **ԽՍՀԱԿԻ ԽՈՒՍԱՎԻԷ ԻՆՏԱԳԱՎԵԼ ԻՆՏԱԳՐԱԿԱՆ ԳԺՎԱՐՈՒԹՅՈՒՆԵՐԻԳ:** րոնելու կուսակցութիւնն ու խորհրդային իշխանութիւնը՝ հացի շուկայում դժվարութիւններ ստեղծող հիմնական պատճառները վերացնելու և ապագայում հացի ֆրոնտի դժվարութիւնների կըրկնութիւնը կանխելու համար:

Կուսակցութիւն այդ գիծը հետևյալ նպատակն ունի.

1. Անհրաժեհ է բարձրացնել գյուղատնտեսության արագ բարձրացումը մակարդակէ այնպես, վոր գյուղի ներկա սննդատուութիւն մակարդակի դեպքում էլ հացի ավելցուկ ունենանք քաղաքների համար, հաց սպառող ռայոնների համար և արտածման համար:

2. Անհրաժեշտ է գյուղում զարկ տալ **խոտու կուլտիւրայի սնտեսութիւն**, վորը կոգտագործի նորագույն տեխնիկան, հացի ավելցուկ կարտադրի և կազմակերպ ձևով այդ ավելցուկը կփոխի քաղաքի արդյունաբերած ապրանքների հետ:

3. Մենք գյուղում պետք է ստեղծենք աշխարհի դրություն, վոր կուլակուրքուներ չկարողանա խանգարել մեր քաղաքականութեանը հացի ֆրոնտում:

4. Մենք պետք է ապահովենք գյուղի մատակարարումը արդուեմբրակաց ապրանքների աշխարհի քանակով և աշխարհի գնով, վորպեսզի գյուղացիութեան մեջ ուժեղացնենք շուկան հաց հանելու խթանը:

5. Մեր գների քաղաքականութեան մեջ գյուղատնտեսութեան տարրեր մթերքների նկատմամբ մենք պետք է գլուխ բերենք գների աշխարհի հարարերակցութեան, վորով հացահատիկի տնտեսութեանը զարգանար ավելի յեռանդով, քան մինչև այժմ, և վորի շնորհիվ հաց վաճառելը ձևոնտու լիներ գյուղացիութեան համար:

6. Հաց մթերող ապարատը պետք է կազմված լինի աշխարհ, վոր նա աշխատի ավելի կազմակերպված (առանց մրցութեան), ավելի ակտիվ (հույս չդնի հանգամանքների բերումին) և ավելի եժան (կրճատի առևտրական ծախսերը):

Այստեղ տեղը չե մանրամասն կանց առնել բոլոր այն միջոցների վրա, վորոնք ուղղված են մատնանշված նպատակներին հասնելու համար: Բերենք հիմնականները.

**I Գյուղատնտեսության արտադրանքը բարձրացնելու գծով:** Մենք պետք է ձգտենք մեր հողերի բերքատվությունը բարձրացնել թեկուզ դեպքում 2—3 փութ, մենք վոչ միայն կապահովենք հացով ներքին պահանջը, այլ և զարկ կտայինք հացի արտածումին, վորպեսզի զարկ տայինք և մեքենաների ու սար-

քավորման ներածումին՝ արտասահմանից: Մի շարք ուշուներում դեռ հնարավորութեան կա ընդարձակելու գյուղացիական տնտեսութեանների ցանքսերի տարածութեանը, հողաշինարարութեանը, չքավորների և միջակների մեքենաներ, պարարտանյութեր, լավ տեսակի սերմեր, գյուղատնտեսական ոգնութեան հայթայթելը—այս խնդիրները հիմա պահանջում են ավելի մեծ ուշադրութեան և շատ միջոցներ, քան մինչև այժմ: Պարզ է ինքնին, վոր բոլոր այս միջոցները կիրառելու ժամանակ **գասակարգային գիծ** վարելը հանդիսանալու է խորհրդային և կոոպերատիվ մարմինների աշխատանքի պայմանը:

Բայց բերքատվութեան բարձրացումն իսկապես լուրջ չափերով փոքր տնտեսութեան ուժից վեր է: Կուլակին այստեղ բոլոր առավելութեաններն ունի չքավորի և միջակի հանդեպ: Ընկ. Յակովլևը XV-րդ համագումարին ներկայացրեց այսպիսի թվեր. տարեկանի բերքն Ուրլովի նահանգում՝ չքավորների տնտեսութեան մեջ, կազմում է 35 փութ՝ դեպքատինից: Վորքան տնտեսութեանն ամուր է, բերքն այնքան բարձր է. ավելի ունեւոր տնտեսութեանների մեջ մի դեպքատինի բերքը հասնում յե 53 փութի: Սոշոլր տնտեսութեան առավելութեանը սա յե: Ուստի և, ձգտելով բարձրացնել չքավորների ու միջակների գոյութեան ունեցող անհատական տնտեսութեանների բերքատվութեանը, մենք պետք է հիշենք, վոր իրապես բերքատվութեան մասսայական բարձրացումը իսկական լուրջ չափերով հնարավոր է միայն փոքր տնտեսութեանները վերակազմելով՝ դնել նրանց խոշոր կոլլեկտիվ տնտեսութեանների ռեւանների վրա: Ուստի կոլլեկտիվացման լուրուսը

մեկ չի ազատում միլիոնավոր անհատական չքավոր ու միջակ տնտեսությունների հզորացմանը աջակցելու պարտականությունից:

**2. Գյուղատնտեսության կոլեկտիվացման գծով:**

Գարնան ցանքսի կամպանիայի փորձը ցույց տվեց, վոր ինչպես հարկն է, կոլեկտիվացման գործին ձեռնարկելով, մենք կարող ենք առաջ բերել լուրջ բեկում:

Նախնական ավյալների համաձայն, կոլտնտեսությունների (կոմունաների, արտելների և ընկերությունների) թիվը դարնան ցանքսի կամպանիայի շրջանում անելացավ 8.200 միավորով (այս ավյալներն անպայման պահաս են, վորովհետև այստեղ հաշվի չեն առնված մի շարք շրջանների աճումը): Բացի դրանից, այս տարվա դարնանը կազմակերպված են 7<sup>1</sup>/<sub>2</sub> հազարից ավելի պարզ միություններ (մեքենաողտագործման, սերմարուծական, մելիորատիվ և նման ընկերություններ): Առանձին խոշոր ուսյոններում կոլտնտեսությունների թիվը միմիայն այս տարվա դարնանը կրկնապատկվել է: Թեև ստույգ ավյալներ կան միայն 8.200 նոր տնտեսությունների վերաբերմամբ, բայց հիմք կա կարծելու, վոր մենք այժմ **ԽՍՀՄ** մեջ ունենք 40 հազար կոլտնտեսություն (հակառակ 1927 թվի 21 հազարի), և նույնքան էլ պարզ ընկերություններ:

Թե վորքան նշանակություն ունի կոլեկտիվացման այս բուռն թափը մեկ հետաքրքրող հացի խնդրի համար, յերևում է հետևյալ ավյալներից: Կոլտնտեսությունների բերքը, վորպես ընդհանուր կանոն, զգալիորեն բարձր է անհատական տնտեսությունների բերքից: Այսպես

կենտրոնական— Սեանոդյան շրջանում տարեկանի բերքը 1927 թվին դեպատինից յեղել փթերով.—

կոմունաներում . . . . .	69,8
արտելներում . . . . .	64,4
ընկերություններում . . . . .	42,0
անհատ. տնտեսություններում . . . . .	81,6

Կոմունան, այսպիսով, դեպատինից ստանում է յերկու անգամ ավելի բերք, քան մանր տնտեսությունը.

Հյուսիսային Կովկասում աշնան ցորենի բերքը (փթերով) 1927 թ. կազմել է դեպատինից.

կոմունաներում . . . . .	100,9
արտելներում . . . . .	100,0
ընկերություններում . . . . .	90,0
անհատ. տնտեսութ. . . . .	84,9

Այստեղ էլ, վորքան խոշոր ու կազմակերպված է տնտեսությունը, այնքան ավելի բերք է տանում դեպատինից:

Վերը, ընկ. Ստալինի բերած աղյուսակից մենք տեսանք, վոր կոլտնտեսություններն ու խորհրդ. տնտեսությունները, մանր տնտեսությունների համեմատությամբ, տալիս են հացի մեծ ապրանքայնություն (կոլտնտեսությունների և խորտնտեսությունների հացի ապրանքայնության տոկոսը հավասար է 47,2-ի, հակառակ չքավոր և միջակ տնտեսությունների 11,2%-ի):

Մենք ունենք նույնպես առանձին, ավելի խոշոր և կազմակերպված կոլտնտեսություններ, վոր տալիս են 60%<sub>0</sub> ապրանքային արտադրանք (որինակ «Կարլ Մարքս կոմունան Հյուսիսային Կովկասում»):

Այսպիսով, կոլեկտիվացումը, վոր այժմ մասսա-

յական շարժում և դառնում գյուղում, հանդիսանում և հացի Ֆրոնտի դժվարությունները իրապես վերացնելու հիմնական միջոցը, վորովհետև խոշոր անտեսությունը տալիս և խոշոր քնդհանուր արտադրանք և ավելի ապրահանից հաց:

Կոլանտեսություններից բացի, մենք գյուղում ունենք խոշոր հասարակական կազմակերպության մի ուրիշ տեսակը—**խորհրդային սեփեսուքյուցները**: Կուսակցությունը բռնել և այն գիծը, վոր մոտակա 4--5 տարվա մեջ այժմ դատարկ մնացած հողերի վրա ըստեղծի խոշոր խորանտեսությունների ցանց (յուրաքանչյուր անտեսության 10-ից մինչև 30 հազար շերտ, հող հատկացնելով), վորոնք կարող կլինեն տալ տարեկան 100 միլիոն փիթից վոչ պակաս ապրանքային հաց: Սոր. անտեսությունների այս ցանցը կհանդիսանա մեր հացի շուկայի ավելի կազմակերպված բազաներից մեկը:

Այս ծրագրի գործնական կիրառումը սկսված և արդեն: Ծրագրված և խոշոր խոր. անտեսությունների ցանց ստեղծել գյուղատնտեսության կողմից դեռևս չընդգրկված հողերի վրա—չյուսիսային Կովկասում. Կազակստանում, Սիբիրում, Վոլգայի ներքին և միջին շրջաններում, Բաշկիրիայում և Ղրիմում: Հաշվելով, յեկող սարի արդեն նոր խոր. անտեսությունները պետք և տան մոտ 5—6 միլիոն փութ հաց: Նոր խոր. անտեսություններն արդեն այս տարի ստանում են 570 տրակտոր, իսկ միջոցների ընդհանուր գումարը, վոր այս տարի հատկացված և այդ գործին, կազմում և 17 միլիոն ուրբլի:

Սոշոր հացահատիկ արդյունաբերող խոր. տըն-

անտեսությունների համար ծրագրված և առաջիկա միջանի տարում ոգտադործել այժմ դատարկ մնացած 2 միլիոն դեսյատին հողը:

Ինչո՞ւմ և այս վիթխարի-խորանտեսությունների առավելությունը: Մենք արդեն մեր կոլանտեսությունների փորձով պարզ տեսնում ենք՝ թե վորքան խոշոր և կոլլեկտիվ անտեսությունը, այնքան ավելի ձեռնտու յե: Այսպես, որինակ, խոշոր կոլանտեսություններում (20-ից մինչև 40 հազար ուրբլու արժեքի տրապրանք ունեցող) աշխատանքի արտադրողականությունը յերեք անգամ բարձր և, քան մանր կոլանտեսություններում (5 հազար ուրբլու արժեքի արտադրանք ունեցող): Պարզ և, վոր կոլանտեսությունների գործնականից առած այս յեղբակացությունը կիրատելի յե և խորանտեսությունների նկատմամբ:

Ուշադրության և միջոցների կենտրոնացումը գյուղատնտեսության կոլլեկտիվացման վրա հանդիսանում և հացի Ֆրոնտի դժվարություններից յեկնելու կարևորագույն պայմանը:

**3. Կուլակի յեվ սպեկուլյանտի դեմ պայքարելու գծով** ամենից ավելի իրական միջոցը հանդիսանում և կուլակային անտեսության հարկումն ուժեղացնելը:

1928/29 թ. գյուղատնտեսական հարկի որենքը կազմված և այնպես, վոր չքավորների և սակավազոր միջակների հարկի ծանրությունը թեթևացնելով՝ ուժեղացվի գյուղական վերնախավի հարկումը: Հարկի բնդհանուր գումարը ավելացված և 80 միլիոն ուրբլով (մոտավորապես 25% ուով), անցյալ տարվանի հակառակ: Ըստ վորում, անտեսությունների 35% ը—այստեղ մանուս

ին չքավորները — բոլորովին ազատվում են հարկից, տնտեսութունների 12<sup>0</sup>/<sub>0</sub>-ը — սակավագոր միջակները — վճարելու են անցյալ տարվանից քիչ. տնտեսութունների 27<sup>0</sup>/<sub>0</sub>-ը — միջակները — վճարում են նույնքան, վորքան և անցյալ տարի. մնացած, ավելի ունեոր տնտեսութունները պետք է վճարեն ավելի, քան առաջ: Ըստ վորում, տնտեսութունների 12—13<sup>0</sup>/<sub>0</sub>-ը կուլակները լեվ կուլակներին մոտեցողները — կվճարեն 90 միլիոն ռուբլի ավելի, քան անցյալ տարի: Այսպիսով, հարկի ամբողջ ավելացումն ընկնում է գյուղի ամենավերին խավի վրա: Այսպիսով, կուլակի համար առավել դժվար կլինի հացի սպեկուլացիա անել:

Բայց բանը մենակ հարկը չէ: Պետք է գյուղում այնպիսի պայմաններ ստեղծել, վոր կուլակ-սպեկուլյանտը իրեն զգա չքավորների և միջակների հակողության ներքո, վորոնք կտեսնեն նրա արարքները և զիմակազերծ կանեն նրան:

Միանգամայն անթույլատրելի է, հանցանք և գործադրել այնպիսի միջոցներ, ինչպիսին է 107 հոդվածի կիրառումը և այլն, առանց տարբերելու, առանց իսկական կուլակ-սպեկուլյանտ սառեերին խնամքով հայտնաբերելու: Այդպիսով կարելի է կուլակի համար պատրաստած լարվածը իջեցնել միջակի գլխին: Դա կլինեն կուլակցության գծի խախտումը գյուղում: Բայց ինչ վերաբերում է իսկապես կուլակներին, չարանենց սպեկուլյանտներին, դրանց նկատմամբ նրանց կողքին կազմակերպված չքավորութունը իսկապես պետք է կիրառի ամենախիստ միջոցներ:

4 Գյուղին պարանի հայրապետի գծով: Ամառային ամիսներում պետք է այնպես կազմակերպել

արդյունաբերության աշխատանքը, վոր աշնանը բավականաչափ արդյունաբեր. ապրանքներ ունենանք՝ հաց և հում նյութեր արտադրող ռալյոնների համար: Անցյալ տարի մեր արդյունաբերութունն (արձակուրդների, վերանորոգման և այլ պատճառով) այնքան կրճատեց իր արտադրանքը, վոր մենք աշնանը մնացինք առանց արդյունաբեր. միջերջների պաշարի: Այս դասն իզուր չպետք է անցնի:

Բայց ամառվա շրջանի խնդիրը — մասնակի բան և միայն: Հիմնական խնդիրն այն է, վոր գարկ տանք յերկրի արդյունաբերական արտադրանքին: Նախնական հաշվի համաձայն, արդյունաբերութունը առաջիկա 1928.29 տարում կտա 18<sup>0</sup>/<sub>0</sub>-ով ավելի ապրանք, քան անցյալ տարի: Ըստ վորում, թեթև ինդուստրիան, վոր պատրաստում է մասսայական գործածության առարկաներ, իր արտադրանքը կավելացնի 15<sup>1</sup>/<sub>2</sub><sup>0</sup>/<sub>0</sub>-ով:

Արդյունաբերական արտադրանքի այսպիսի բարձրացումը պահանջում է հսկայական աշխատանք արտադրության ռացիոնալացման համար և խոշոր միջոցներ՝ արդյունաբերական շինարարության համար:

Յերկրորդ հիմնական խնդիրը — զա ապրանքի պաշարի բաշխումն է յերկրում: Անհրաժեշտ է ապահովել այնպիսի գրութուն, վոր հացի և հում միջերքի ռալյոնները, կամ վանիայի հենց սկզբից, պլանային կարգով տարվեն արդյունաբերական ապրանքներ՝ բավականաչափ քանակությամբ և անհրաժեշտ աստորտիմետով:

5. Գյուղատնտեսական մթերքների գների հարբերակչության գծով: Մեզանում ստեղծվել է այնպիսի գրութուն, վոր հացի գների ինգեկտը գոնավում

և գյուղատնտեսական բոլոր մյուս մթերքների գների  
ինդեքսներից հաժր: Այսպես, մթերման գների ինդեկ-  
սը 1927 թ. վերջում կազմում էր (1913 թ. գները ըն-  
դունված են 100).

Հացահատիկային կուլտուրաներ . . . . . 109,4

Յուղասերմեր . . . . . 111,0

Տեխնիկական կուլտուրաներ (բամբակ,  
վուշ) և այլն . . . . . 140,4

Անասնապահական մթերքներ (միս, յուղ և  
այլն) . . . . . 188,8

Կենդանի հում նյութեր (կաշի և այլն) . 174,8



« Ազգային գրադարան



NL0226444

55.090

ԳԻՆՆ Ե 10 ԿՈՊ.